



Ողջոյն մեծ պատուարժան հարցդ Միաբանութեան Միխիթարեանց եւ հանուրց մասնակցացդ գիտաժողովիս, յորում ի մի եկին մեծամեծ խորհրդանիշք՝ որ յարանորոգ վերընծիւղմամբ չեւ եւս ի լրումն մշտնջենահաղորդ կատարելութեան իւրոյ հասեալ է՝ ինքնութեանն Հայոց, զորոյ զվսեմ հաստատութիւնն՝ մշտակենդան, անսասան եւ անաղարտ յոգեղէնս եւ՝ ըստ կարի անցաւոր տկարութեան մարդկայնոյ՝ ի նիւթեղէնս պահել, պաշտպանել եւ ծաղկեցուցանել մարթասցուք: Ա՛սան զի ի վերուստ ի մեզ՝ ազգայնոյ բնորրանիս մերում շնորհեցելոց դրաց աշխարհագրականաց աղագաւ՝ մեր՝ ո՛չ մերով, այլ վերին տեսչութեան իսկ կամաւք՝ յանձն առեալ ըստանձնեալ է եւ զառաքելութիւն՝ կալ եւ մնալ ինքնակայ քաղաքակրթակերտ միջնորդ ընդ մէջ քաղաքակրթութեանց արեւմտեայց եւ արեւելից, եւս եւ հանուրց հիւսիսականաց եւ հարաւայնոց:

Այսօրիկ խորհրդանիշք են՝ հարք Միխիթարեանք, զորս ըստ ամենայնի զկնի եւ հաւասարս իսկ Արբոց Թարգմանչացն գոլ վկայեմք, զի արդեամբք արգասեաց նուիրականաց վարուց եւ գործոց իւրեանց զհարեւր եւ զյիսնամեայ նախագիծն վերածնութեան եւ արդիականացման ինքնութեան Հայոց ի գլուխ ածին մեծաւ եւ անակնունելեալ իւրք կատարելութեամբ: Հանգոյն եւ նախընթաց՝ որոց ըստ Միխիթարայ մեծէն Աբբահաւրէ էք հարցդ՝ առ երկրորդ խորհրդանիշ ի գիտաժողովի աստ առաջի մերոցս ունիմք աչաց զմեծ եւ զսուրբ հայրապետն Ներսէս, որ ի ձեռն ներդաշն արդնիւաբեր միասնութեան հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութեանց յեկեղեցաշէն եւ ի պետականակերտ ասպարիսի մեծամեծս արար՝ ջան եւ գուն իսկ եղեալ եւ գործեալ վասն վերածնութեան եւ ամրակուռ անսասանութեան պետականութեանն Հայոց: Եւ այսց նիւթականացելոց յաջողութեանց հասարակաց ազգասուն եւ պետականապահ աւգտից ոչ երբեք մարթ եւ կար իսկ էր նմա հասանել թե յառաջագունէ չէին նորա հաւատ անսասան ի հաստիչն տիեզերաց եւ զառ ի նմանէ նմին շնորհեալ զաւրութիւն հոգեւոր՝ որ ըստ ամենայն մարմնական եւ աշխարհիկ իշխանութեան կարողութիւնս անդրանցանէ: Ա՛րդ՝ երկոքինն հաւասարապէս, զի զքաղցրադառն լուծ հոգեւոր եւ մարմնաւոր վիրաց ազգիս բժշկութեան եւ ազգայնոյ վերածնութեան առաջնորդութեան իսկ ըստանձնեցին զառաքելութիւն, բնազանցականաց կարգի ածանցմամբ հուսկ ուրեմն փայղեցան եւ յասպարիսի ներդաշնակեցման միջքաղաքակրթական ընդդիմակայութեանց՝ նա՛ եւ ի մէջ արեւմտից եւ արեւելից քրիստոնէից՝ ոչ աղուեսաբար, այլ հայրաբար, ոչ իբրեւ զհասարակ ոք հաշտարար եւ միջնորդ, այլ իբրեւ որոց ի վերոյ քան զաշխարհագրական եւ զմշակութածին բաժանումն ազգաց լեալ է՝ հանգոյն իմաստութեամբ եւ խորագիտութեամբ վառեալ աւագ եղբաւր, որոյ կրտսեր եղբարք իւր, թե պէտ եւ ըստ նիւթոյ ստուարութեան մեծ ոք գոլով, ստէպ տարապարտուց մոռանան կամ՝ անտես ընդ վայր առնեն զգերակայութիւն իմաստութեան աւագ եղբաւրն իւրեանց եւ

զմիմեամբք ելեալ ի յորձանս ընդդիմամարտ բախմանց՝ ջանան խորտակել զմարմնով եւ եթ նուազ փարթամացեալ զաւագ եղբայրն իւրեանց:

Արդ՝ ընդ է՞ր ի սկզբան բանիցս զկերտութիւն ինքնութեան Հայոց չեւ եւս ի լրումն կատարելութեան իւրոյ հասեալ կոչեցաք: Ոչ վասն այնր լոկ, զի պետականութիւնք մեր եւ հարստութիւնք թագաւորականք բազմիցս փլուցեալ ընդհատեալ, ապա եւ վերածնեալ լինէին՝ հանդերձ ի նոսա եւ առ նոսին պարբերաբար ծաղկելովք, ապա նուաղելովք եւ մթագնելովք, ապա դարձեալ վերստին ի մոխրոյ եւ ի գբոյ մոռացութենէ յարուցելովք լեզուաբանական, պատմագիտական, կրթական, աստուածաբանական եւ իմաստասիրական աւանդութեամբք եւ հայեցակարգաւք: Աերտութիւն ինքնութեան Հայոց յաստիս անկատար եւ անաւարտ է, զի եւ յարդիականութեան ժամանակաշրջանի աստ՝ յառաջքան զբազմաց այլոց արեւմտեայց ազգաց արդիականացման նախագիծս՝ բարեյանդգնապէս ի հարցն Մխիթարեանց սկզբնաւորեալ եւ բովանդակաբար ըստ ամենայնի յաջողեալ Հայոց վերածնութեան նախագիծն վիժեցուցաւ ի ձեռն ամբոխահաճոյ ոտնձգութեանց ապակենսունակաբար պատճենեալ խեղարդիականամէտ կրկնակ յեղափոխութեանց՝ յերկրորդում կիսի իննեւտասաներորդ դարու: Ը ի ի սկզբան արդիականութիւն կոչեցելոյ ժամանակաշրջանի գերմանացի եւ փռանգ լուսաւորիչք ճոխացուցեալ ամբարձին զազգային լեզուս իւրեանց ի գահ պատուոյ ազգային կամ գրական անուանելոց կաճառական եւ գործավարական լեզուաց: Ը այս արարին ընդ դէմքաղաքակրթական տիրապետութեան Հռովմայ՝ գահընկեցեալ զղատիներէնն, նա՝ եւ զբողոքականութիւն եւ զկրաւնամերժ անաստուածութիւն ընդ դէմնորին հոգեւոր աշխարհակալութեանն ի մէջ ածին, նա՝ զի եւ կազմաւորման ազգայնոց աշխարհիկ պետականութեանց իւրեանց աւգտեսցեն: Այլ ի Հայս այս գործ վերածնութեան ազգայնոյ սկսեալ էր տակաւին ի միջոցի ութեւտասաներորդ դարու, իբրեւ մեծին Մխիթարայ տեսեալ զոմանաւեր եւ զպարսկաւեր փլատակս ինքութեան Հայոց ի հոգեւորս եւ ի պետականս՝ զհրաշակերտ ձեռս իւր էարկ ի սկզբնաւորութիւն արդիականացման նախագծին Հայոց, որ եւ շնորհաբաշխ ընծիւղմամբ յետ հարիւրոց եւ յիսնից ամաց ըստ մեծի մասին յաջողեալ եւ կատարեալ իսկ էր՝ նախ՝ մաքրագերծմամբ լեզուիս յանպիտան անտի յունաբան եւ ղատինաբան եղծութեանց: Աւ ի մերագնեայց նորեկաց արտաքնապատուաստ յեղափոխութեանցն այնոցիկ ջատագովաց անկ եւ պարտ էր երախտագէտ իմն խոնարհութեամբ շարունակել զառաքելութիւնս՝ ամբառնալով զմշակութային եւ զքաղաքակրթական նշաձող արդիականացման եւ վերածնութեան ազգիս՝ յոր հրամայաբար պիտոյ էր՝ ի բարձրութիւն: Այլ նորա անիրազգած լեալ խորհրդոց եւ ներքնոց աւրինաչափութեանց իմաստասիրութեան պատմութեան՝ նախընտրեցին վիժեցուցանել զգործընթաց վերստին միաւորութեան արեւմտահայոց եւ արեւելահայոց ի մի լեզու եւ ի մի գործ պետականակերտութեան՝ ի ձեռն դարմանաբեր եւ կենարար բուժիչ զաւրութեան հանուրց Հայոց ընդհանրական միայնոյ ոսկեղինիկ լեզուին՝ բառնալով ի միջոյ

զիւրտուիլ աւաղեալ բաժանման մերոյ յարեւմտահայս եւ յարեւելահայս՝ ընդ բռնարար իշխանութեամբ աշխարհակալ տերութեանց, ապա եւ եղեռնագործ խաժամուժ ցեղից յարեւելից եւ ի հիւսիսոյ խուժելոց:

Արդ՝ քաղաքակրթութիւն Հայոց նորոգ հաստատեցաւ նախ՝ ի ձեռն Արբոց Թարգմանչացն՝ Արբոյն Ստորովպայ, Արբոյն Սահակայ՝ եւ որոց ըստ նոցանէ ծաղկեցան աշակերտացն նոցին՝ հարց եւ մատենագրաց մերոց՝ ի վերայ անշարժ վիմին սիրոյ առ Աստուած եւ ի գիտութիւն, զի այսպէս եւ եթ սէր հայրենեաց իմաստաւորի, զի կայցէ եւ մնայցէ անսասան: Ապա յետ դարուց ինչ յարեան եւ նոր մեծամեծ մշակք լուսոյ՝ Սուրբն Գրիգոր Նարեկայ վանից վանական եւ Ներսէս Աղայեցի, որ ի յետնոց Շնորհալի արժանապէս կոչեցաւ: Նոցին ոգեղինի սրբութեան հոգւոյ եւ մտաց հանձարոյ պարտիմք աշխարհճանաչութեամբ ընդ ամենայն ծագս երկրի, զի աղաւթք Սատենի ողբերգութեան եւ քերթողութիւնք Շնորհալոյն անիմանալեալ ամոքիչ եւ հոգեւորոգ իւիք երկնայնով ներգործեն զաւրութեամբ, վասն որոյ եւ նոցին շնորհաց արգասեալք անուանք իւրեանց ի համաշխարհային գրական գանձարանի զպատշաճաւոր եւ զինկելի տեղի յինքեանս սեպհականեցին: Եւ զի բանք իմ՝ վայրապար ազգային սնափառութիւն ումեք մի՛ թուիցին, ածից զականատես վկայութիւն միոյ ընկերի իմոյ, որ պատմեացն, թե ի հանդիսի իմեմն ի Հռովմ՝ յորժամ Աւագ Շաբաթու երգք Շնորհալոյն թարգմանաբար յունկն ժողովելոց անդ իտաղացւոցն հնչեցին ընթերցան, բազումք անակնունելի հիացմամբ ապշեալ եւ յուզեալ՝ ոչ կարէին զարտաւար յաչաց իւրեանց թաքուցանել: Եւ զոր մեծի Սխիթարայ Աբբահաւրն եւ աշակերտաց նորին յերկուս եւ յերիս սերունդս իրակերտեալ է՝ այլոց՝ որոց հզար երկրաւոր թագաւորութիւնք են ազգաց՝ յերկուս եւ յերիս դարս իսկ ոչ մարթէին զկարողութիւն հանգունակ ցուցանել: Որոյ վասն եւ չիք ինչ չափազանցութիւն, թե զհարս Սիաբանութեան Սխիթարեանց ի նոյն բարձ պատուոյ ընդ առաջին Թարգմանիչս մեր դասեսցուք՝ զնոսին արդարե՛ւ Արկրորդ Թարգմանիչս եւ լուսաւորիչս ազգիս գոլ ասելով:

Արդ կազմակերպութիւն մեր, որ թե պէտ եւ հրամայականաւ ժամանակիս եւ բնութիւ իսկ իւրով մասնագիտականաւ յառաջնմէ կոչմանէ իւրմէ զճետ նորագունից գերարդիական գիտութեանց եւ ուսողութեանց արուեստից փութացեալ է՝ իմանալեալ իւիք վճռով հաստատնով հիմնադրեաց եւ զերիս կրթական հիմնադրաման՝ զդպրոց հանրակրթական, զդպրոց մասնագիտական եւ զճետազաւտական միջհամալսարանական կենտրոն: Եւ յայսոցիկ երեցունց հաստատութեանց ի հիմունս եղաք զժրագիր լիակատար փոխման լեզուի աւանդման հանուրց առարկայից ուսումնականաց յարեւելահայ աշխարհաբարէ ի դասական լեզու Հայոց, որում՝ ձեռնարկութեանս մերում այսմիկ ամենեքին զաւգնականութեան իւրեանց զձեռն ընծայեցեն:

Առաջինն ի սոցանէ՝ է յերկու հազար վեշտասաներորդ ամի հիմնադրեալ քառամեայ միջին-մասնագիտական ուսումնառական ծրագիրն՝ «Վրական Վպրոց» կոչեցեալ, որոյ նպատակ է յարուցանել եւ արդիականացուցանել զարդի գիտարուեստական եւ զճարտարագիտական ականդոյթս, որք կարի քայքայեալ են ի Հայս ի վերջնում՝ երեսնամեկի: Հիմնադրամն գործէ ի հինգ քաղաքս Հայոց (ի վեցս՝ ցրադարելն գործելոյ մասնաճիւղի նորին ի Վարարակն), յորս աշակերտք՝ սկսեալ ի հնգետասան ամաց, ուսանին զարդի գիտարուեստ եւ զառիթ ստանան ուսնակութեան յարդի ճարտարագիտական ձեռնարկութիւնս, որք գործեն ի նմին իսկ շինութեան դպրոցին՝ յոլոտի թուային սաթուժային սարաց նախագծման, ծրագրաւորման, թուային անվտանգութեան, թուային կապի եւ փաստաթղթաշրջանառութեան համակարգաց՝ վասն կառավարման ապակենտրոնացեալ դաշտային գործողութեանց, եւ ի մասնաւորի՝ սակս մշակման արդի զինու գործեաց եւ արդիւնաւէտ կիրառութեանց նոցին:

Երկրորդ հիմնադրամն՝ է Անտրոն Բարգացման Վիտական Հետազաւտութեանց՝ հիմնեալ յերկու հազար ութեւտասներորդ ամի: Այն կառուցանէ զմիջհամալսարանական արդակ հետազաւտական, որոյ առաքելութիւն է՝ զարգացումն եւ հովանաւորութիւն միջմասնագիտական հետազաւտութեանց: Բոր աւրինակ՝ ի խաչուղւոջ մանկավարժութեան եւ արդի ճարտարագիտութեան զարգանայ «Արմաթ» ճարտարագիտական կրթական ծրագիրն՝ ներդրեալ յառաւելքան ի վեց հարեր դպրոցս Հայոց: Ալ ի խաչուղւոջ լեզուաբանութեան եւ տեղեկագիտութեան՝ ուսանողք եւ հետազաւտողք մեր ուսումնասիրեն զհամակարգչային մշակումն բնական լեզուաց՝ կիրառութեամբ արդի արհեստական բանականութեան հնարից եւ սարաց, ի մասնաւորի՝ ինքնաբեր ածումն գրաբարեան գրահիւսի ի ձայն եւ ձայնագրեալ խաւսից ի գրահիւս, համակարգչային թարգմանութիւն ի գրաբարէ յաշխարհաբար, ինքնաբեր կորզումն անդրագոյ իմաստից եւ թելի մտաց գրութեան ի գրահիւսէ, եւ այլն:

Երրորդ հիմնադրամն՝ է Վպրոց Վասական, որոյ առաքելութիւն է՝ ստեղծումն դասական կրթակարգի վասն տարրական եւ հիմնական հանրակրթական դրպրոցաց՝ սկսեալ ի հնգից ամաց ցհնգետասան ամն՝ ցտիս ընդունելութեան յՎրական Վպրոց: Կրթակարգ առաջնոց հնգից ամաց գերազանցապէս ի դասական լեզուս հայի՝ ի գրաբար՝ յանդաստանի լեզուի Հայոց, եւ ի ղատիներէն՝ փոխանակ արդի աւտար լեզուաց: Մանկավարժական եւ իմացաբանական նպատակք մեր հային ոչ սոսկ ի վերադարձ դասական լեզուի Հայոց ի կրթակարգս ամենայն դպրոցաց, համալսարանաց եւ ուսումնարանաց, եւ ոչ իսկ սահմանափակին մշակութեամբ ամբողջական գրաբարեան կրթակարգի՝ զբնագիտական եւ զճարտարագիտական ուսումնական մատեանս ի դասական լեզու Հայոց փոխադրելով, այլ առ հասարակ՝ միտեալ են ի միաւորումն եւ ներդաշնակումն իրական եւ դասական անուանելոց կերպից մանկավարժականաց, որք ի սկզբան արդիականութեան դարաշրջանի

տրոհեցան յերկուս իրարամերժ դպրոցս, մին յորոց՝ Նրականն՝ կուրացեալ արդի նուաճմամբք ի նիւթականսն՝ հնացեալ եւ անպիտան հռչակեաց զամենայն դասական արուեստս գրականութեան, աստուածաբանութեան եւ դասական լեզուաց ուսողութեան:

Մյսոքիկ հանուրք միջմասնագիտական հետազաւտութիւնք՝ են հրահանգեալք անհնարինութեամբ լուծման խորագունից խնդրոց կերտման ինքնիշխան պետականութեան եւ ազգայնականութեան ի շրջանակի մեկուսելոց գիտակարգաց կաճառականաց: Վասն զի զոր ինչ մարթ է ի գաղութացեալ պետութիւնս ի բաց առնուլ ի կրթակարգէ՝ զմիահաւաք կենարար գիտութիւնս՝ ոչ են անձուկ մասնագիտական մեկուսի ճեւղք ինչ կաճառական գիտութեանց, այդ երեւութաբանականք են, որք եւ ւստարաբան եզրութիւ phenomelogic կոչին՝ միջմասնագիտական հետազաւտական ուղղութիւնք: Նւքան զամենայն կարեւոր իմն առաքելութիւն միջամալսարանական կենտրոնի մերոյ՝ է արժեւորումն միջմասնագիտական հետազաւտութեանց եւ աշխուժացումն միջամալսարանական համագործակցութեան առ Հայաստանեայս:

Նւ զկենտրոնադիր գահ պատուոյ ի շարս այսց միահաւաք գիտութեանց ի պէտս եւ ի սպաս ինքնիշխան պետականութեան Հայոց ընծայելք քաղաքակրթագիտութեանն առ հասարակ, եւ ի մասնաւորի՝ Վաղաքական աստուածաբանութեանն, իմն՝ ուսումնասիրութեան Նիքնիշխանութեան երեւութին՝ բնազանցական եւ իմաստասիրական պարագայից ծագման եւ կործանման ինքնիշխան պետութեանց եւ՝ յորոց վերայ հիմնեալ եւ ուստի յառաջագայեալ իսկ են՝ քաղաքակրթական տարածութեանց՝ ըստ համաւրէն հանգամանաց նոցին: Նւս առաւել՝ յարաբերութեան ի մէջ իրաւականի եւ քաղաքականի: Վասն զի որք յաւուրս խաղաղութեան զինքեանս եւ խնամոց պատասխանատուութեան իւրեանց վստահացեալ հասարակութիւնս եւ զպետութիւնս՝ իմացութեամբ եւ հպատակութեամբ ընդհանրական կառավարեն աւրինաց՝ յաւուրս արհաւրաց եւ արտակարգ իրավիճակաց աւրհասից եւ գերակայ ազդեցութեան ուժոց անյաղթահարելեաց, որ առ ւստարս force majeure կոչի, յանձին պարտին ունել զկարողութիւն ըստ ամենայնի զանսասան վճռականութիւն, զինքնիշխանադիր եւ զինքնիշխանաբուխ վարս եւ գործունէութիւն ցուցանել: Ըի եւ Մատուած ըստ պատկերի եւ նմանութեան իւրում ետ ցմարդիկ զբացարձակ եւ զանպատճառ ազատ կամն, որով եւ յամենեսին եդ զպարտականութիւն զայնոսիկ անձնիշխան կամն ընդ ամենայն աւուրս կենաց ի կարեւորս եւ յերկրորդականս ի սպաս բարեաց, յարգելումն չարեաց եւ ի զարդ ամենայն ստեղծուածոյ արկանել: Վան զի յաւուրս արհաւրաց՝ ընդ թմբրիչ ազդեցութեամբ տեղեկատուական պատերազմաց բազումք ի բարձրաստիճան պատշաւնէից բաւական համարեն վարչարարական եւ եթ հմտութեամբք եւ իմացութեամբ առաւրէից կանոնադրութեանց առաջնորդել՝ որոց զինքնիշխանութիւնն իւրեանց աւր ըստ աւրէ կորուսանեն՝ կաթուածահար

պետութեանցն, եւ վարանին զարտակարգ իրավիճակս յայտարարել եւ զարտաքոյ կարգի եւ իրապաշտութեան վարկուցեալ զանլուր եւ զյանդուզն գործողութիւնս վասն փրկութեան նոցայն վստահեցելոց հասարակութեանց եւ պետութեանց նախաձեռնել, յոր հրամայաբար նոցին անկ իսկ է գուն գործել՝ յաղագս ի պատերազմի մաքառման եւ ընդդիմակայութեան եւ վասն յաղթանակի:

Մյուսքիւք դիտաւորութեամբք պարագրին ամենայն նախագիծք ծրագրեալք ի գիտահետազաւտական կենտրոնի մերում, եւ իւրաքանչիւրն այսց նախագծաց յինքեան ներառէ զմասնիկ հանուրց՝ որք ի լեզուական բարեշրջութիւն, յազգային վերածնութիւն, ի գիտարուեստական արդիականացումն Հայաստանեայց, եւս եւ ի մուտն Վաղարական աստուածաբանութեան ի կրթակարգ դպրոցին Հայոց հային՝ գաղափարական ուղղութեանց:

Մին յայսց նախագծաց է տեղեկատուական համակարգ թուային կառավարման, կապի եւ փաստաթղթաշրջանառութեան, յոր զձեռն մեր արկաք ի պէտս ներկայացման Միխիթարեան Միաբանութեան յարդի թուային տարածութեան՝ իբրեւ զհանգոյց համացանցային եւ իբրեւ զդիւրակիր յաւելուած, եւ յերկոսին եւ եթ ի յետնաբեմի՝ զմիասնական շտեմարան տեղեկութեանց, որ սպասաւորէ զհարցմունս առանձին բաժանորդաց եւ մատուցանէ նոցա զհայցեալ տուեալս, փաստաթուղթս, զտպագրեալ թուային նիւթս, զձայնագրեալ եւ զտեսագրեալ ուղերձս եւ զայլ արգասիս շարունակական բեղմնաւոր գործունէութեան հարցն Միաբանութեան յարդի տեղեկատուական տարածութեան: Վասն զի համաշխարհային պատերազմ եւ ի մեր մոլեգնի աւուրս, եւ այն ոչ է սոսկ դաշտային պատերազմ, այլ եւ պատերազմ տեղեկատուական: Բ՛ի արդի տարասեռ պատերազմունք նախ սկսանին յանդաստանի տեղեկատուութեան, եւ արդ՝ պատերազմին, ընդ միմեանս բախին եւ չափին նախ՝ իմաստք եւ տեսիլք ապայի, բանաձեւք մշակութայինք, կրթականք եւ քաղաքակրթականք, եւ հուսկ ուրեմն՝ յետ յաղթելոյ յանդաստանի իմաստից՝ ազգք եւ երամք ազգաց մարտուցեալք զյաղթութիւն իւրեանց մարմնաւորեն ի նիւթականսն՝ ի տնտեսութեան, յաշխարհագրութեան եւ ի դաշտի ռազմի:

Յառաջում տարբերակի առցանց համակարգիս ներառեալ է նա եւ թուային տարբերակ յիննալեզու հրատարակութեան Արբոյ Ներսեսի Հնորհալոյն «Հաւատով Սոստովանիմ» աղաւթից, որ ի սմին՝ յերկու հազար քսաներորդ երրորդ ամի վերստին ի լոյս տպագրեցաւ: Ըրդ՝ այն եղեւ մեզ առիթ հրապարակման յաւելուածոյս եւ է անդրանիկ մատեան ի թուային մատենադարանի նորին: Աւ յիրաւի՝ զմիջներեան ծրագրիս, որ առ աւտարս interface կոչի, եւ բազմաց լեզուաց սատարէ՝ որպէս անկ է արդի յաւելուածոց համակարգչայնոց, նախ՝ ի դասական լեզու Հայոց կազմեցաք, եւ յետ սակաւու՝ է մեր կամ զղատիներէն եւս երկրորդ լեզու գործառական սորին յաւելուածոյ առնել: Վասն զի յընթացս յոլովամեայ արդի մանկավարժական

գործունէութեան մերոյ բազմիցս առիթ եղեւ մեզ տեսանելոյ, զի արդիականամէտ դիւրապաշտ «յեղափոխականք» ի գրապայքարի շրջանի սխալմամբ կամ յանցաւոր ամբոխահաճոյ դիտաւորութեամբ շփոթեցին զկարծեցեալ բարդութիւն ուսումնասիրութեան դասական լեզուաց ընդ առ հասարակ լեալ առարկայական բարդութեան յուսուցանել ինչ մանկտուոյ ի խախուտ տարուբերեալ ամբոխավարութեան դարաշրջանի, յորում թուի թե հաւասար պայմանք ամենայն աշակերտաց ընծայիցին: Այդ յայտ է որոց փորձենն, զի յիրականութեան՝ է կարի դժուար յաղթահարելի մշակութային անջրպետ ի մէջ արտունեալ ընտանեաց մանկանց, որք ընդունակ են զպատշաճ ժամանակ յատկացուցանել խորամուխ լինելոյ ի գրականութիւն, յարուեստ, ի զգայականսն եւ ի բնազանցականսն, եւ ի մէջ մանկանց հասարակաց, որոց գուցէ եւ են արդի գործիք հաղորդակցութեան, արդի եւ մեծագին փոխադրամիջոցք, եւ այդ մեծագին իրք նիւթականք, եւ թուի թե արտունեալ իցեն, այդ տակաւին չկարեն ճանաչել զարուեստ, կարաւտանան գեղագիտութեան վայելչութեան, եւ ոչ իմանան զգաղտնիս «յամբութեան ժամանակի»՝ առ ի խորամուխ լինելոյ ի խորհուրդս ներդաշնութեան շարժութեանց ազդմանց մտաց, հոգւոյ եւ մարմնոյ:

Յաւարտի զեկուցիս եւ նախ քան ի գործնականի զներկայ վիճակ թուային համակարգիս ցուցանիցեմ, կամիմ զերախտիս յայտնել Սխիթարեան հարցդ՝ վասն ընծայելոյ զառիթ զեկուցիս, եւ զշնորհակալութեան բանս ինչ առ դասական լեզուի ուսուցչապետն մեր Աղեքսանդր Վանանանց յղել, որոյ ջանիւք կրթակարգ դպրոցաց մերոց աւր ըստ աւրէ ճոխանայ նորանոր դասամատենաւք եւ աւրինակաւք արդի կենդանի եւ կենարար Հայոց դասական լեզուի, եւ ի մասնաւորի՝ յինէն շարագրեալ այս բանք նուաստիս կարի ճոխացեալ եղեն: